ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
Խորհրդի 29.04.2026թ.-ի
թիվ DEC 11-12 արձանագրությամբ
Խմբագրություն թիվ 2

ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ

ՈՒԺի մեջ է 12 մայիսի 2026թ.-ից

ՆՊԱՏԱԿԸ

«Շահութաբաժինների վճարման քաղաքականության» (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակն է սահմանել «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) շահութաբաժինների վճարման որոշման սկզբունքները, շահութաբաժինների վճարման և դրանց վերաբերյալ որոշումների կայացման կարգը:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Քաղաքականությունը կիրառվում է Բանկի ընդհանուր ժողովի, խորհրդի, տնօրինության, իրավաբանական դեպարտամենտի, Ֆինանսական բլոկի կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ կանոնադրություն	
Բանկի հեռանկարային զարգացման ծրագիր	PDP 1

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն քաղաքականությունն իրականացվում է Բանկի բաժնետերերին շահութաբաժինների վճարման գործընթացը կանոնակարգելու նպատակով:

1.2. Շահութաբաժնային քաղաքականություն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է ՀՀ բանկային, բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ, ՀՀ նորմատիվ իրավական այլ ակտերով, Կանոնադրությամբ, սույն փաստաթղթով և ներքին իրավական այլ ակտերով:

1.3. Քաղաքականությունը ենթակա է քննարկման առնվազն տարին մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կարող է վերանայվել:

1.4. Շահութաբաժնային քաղաքականության հիմնական դրույթներն ու սկզբունքները կարող են փոփոխվել՝ ելնելով տնտեսական իրավիճակների և/կամ հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակների փոփոխություններից:

1.5. Շահութաբաժինների վճարման և դրանց չափերի մասին որոշում ընդունելիս հաշվի են առնվում Բանկի իրացվելիության ու վճարունակության ընթացիկ և կանխատեսվող մակարդակները, Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Քաղաքականության գլխավոր նպատակն է՝ որպես Բանկի շահույթի կառավարման քաղաքականություն, ապահովել բաժնետերերի համար շահութաբերության այնպիսի մակարդակ, որը պահպանելով բաժնետերերի և գործադիր մարմնի շահերի հավասարակշռվածության սկզբունքը, թույլ կտա Բանկին իրականացնել հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակները, այդ թվում՝ ապահովել Բանկի շուկայական արժեքի և ներդրումային գրավչության, ինչպես նաև ֆինանսական կայունության, կապիտալացման, իրացվելիության և այլ ռազմավարական նպատակների իրագործումը:

2.2. Շահութաբաժինները վճարվում են Բանկի զուտ շահույթից՝ հարկերը վճարելուց հետո, որը հաշվարկվում է օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

2.3. Շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

2.4. Բանկն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական հիմնադրամից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից:

2.5. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե լրիվ չի վճարվել Բանկի կանոնադրական հիմնադրամը:

2.6. Բանկը իրավասու չէ իր բաժնետերերին հայտարարել և վճարել շահութաբաժիններ, եթե Բանկի խորհրդի կամ ընդհանուր ժողովի որոշման ընդունման պահին առկա է և կամ այդ որոշման կատարման արդյունքում կարող է առաջանալ ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները չկատարելու ռիսկ: Մասնավորապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից կարող է արգելվել կամ սահմանափակվել շահութաբաժինների վարումը, եթե Բանկի կայունությունը վտանգված է:

2.7. Բանկը շահութաբաժինների վճարման քաղաքականությունն իրականացնում է կապիտալի պահպանողական և հեռանկարային (forward-looking) կառավարման սկզբունքով՝ ապահովելով, որ շահույթի բաշխումը չի հանգեցնի Բանկի կապիտալի համարժեքության, իրացվելիության, ռիսկային ցուցանիշների և տնտեսական նորմատիվների թուլացման:

2.8. Շահույթի բաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ Բանկը առաջնահերթորեն ապահովում է ներքին սահմանված կապիտալի բուֆերի պահպանումը, ռազմավարական աճի ծրագրերի ֆինանսավորումը, վարկային պորտֆելի կայուն զարգացումը և հնարավոր սթրեսային սցենարների նկատմամբ բավարար դիմադրողականությունը: Շահույթի բաշխումը չի կարող իրականացվել այնպիսի ծավալով, որը կարող է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում խաթարել Բանկի ֆինանսական կայունությունը, ներդրումային ծրագրերի իրականացումը կամ կարգավորիչ պահանջների կատարումը:

2.9. Շահութաբաժինների վճարում չի իրականացվում, եթե դրանց վճարման արդյունքում կամ վճարման վերաբերյալ որոշման ընդունման պահին իրականացված ֆինանսական կանխատեսումների համաձայն Բանկի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշներն առաջիկա 12 (տասներկու) ամիսների ընթացքում կարող է նվազել Բանկի կողմից սահմանված ներքին թրիգերների մակարդակից՝ ապահովելով բավարար կապիտալի բուֆեր հնարավոր սթրեսային սցենարների պայմաններում:

ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բանկի կողմից բաժնետերերին շահութաբաժինների վճարման համար անհրաժեշտ նախապայմանը Բանկի զուտ շահույթի առկայությունն է, որը ստացվել է նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով:

3.2. Բանկն իրավասու է իր բաժնետերերին հայտարարել և վճարել եռամսյակային, կիսամյակային (միջանկյալ) կամ տարեկան շահութաբաժիններ:

3.3. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

3.4. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 (հիսուն) տոկոսը: Այն դեպքերում, երբ նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով շահութաբաժիններ չեն բաշխվել, միջանկյալ շահութաբաժինների չափը սահմանվում է՝ ելնելով ընթացիկ տարվա կուտակված զուտ շահույթից՝ սույն քաղաքականության 2.6-ից 2.9 կետերով սահմանված պահանջների պահպանմամբ:

3.5. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե

Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

3.6. Շահութաբաժինները վճարվում է դրամով, իսկ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նաև այլ գույքով, այդ թվում՝ Բանկի բաժնետոմսերով:

3.7. Բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Բանկի կողմից չեն երաշխավորվում:

3.8. Շահութաբաժիններն արտահայտվում են մեկ բաժնետոմսին ընկնող գումարով:

3.9. Բանկի տնօրինության տակ գտնվող բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում:

3.10. Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարվելու դեպքում դրանք կուտակվում և վճարվում են հետագայում բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով:

3.11. Շահութաբաժինների վճարման վերաբերյալ առաջարկը նախապես ենթակա է ֆինանսական ազդեցության վերլուծության, որը ներառում է առնվազն 12–24 ամսվա կտրվածքով կապիտալի և իրացվելիության ցուցանիշների կանխատեսում՝ հաշվի առնելով Բանկի ռազմավարական ծրագրերը և տնտեսական միջավայրը:

3.12. Շահութաբաժինների վճարման վերաբերյալ առաջարկ ներկայացնելիս՝ Ֆինանսական տնօրենը և Ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայության կողմից համատեղ իրականացվում է շահույթի բաշխման ազդեցության համապարփակ գնահատում, որը ներառում է Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշի և դրա կանխատեսվող դինամիկայի վերլուծությունը, իրացվելիության ցուցանիշների և կարգավորիչ նորմատիվների պահպանման գնահատումը, ակտիվների աճի ծրագրերի և ռազմավարական ներդրումների ֆինանսավորման անհրաժեշտության դիտարկումը, ինչպես նաև ռիսկային ցուցանիշների գնահատումը, ներառյալ՝ խնդրահարույց վարկերի մակարդակը, վարկային պորտֆելի աճի տեմպը և վարկային ռիսկի արժեքը:

3.13. Նշված գնահատման արդյունքները համախմբվում և Ֆինանսական տնօրենի կողմից ներկայացվում են Խորհրդին՝ շահութաբաժինների վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու նպատակով՝ ոչ ուշ, քան համապատասխան որոշման ընդունմանը նախորդող 15 աշխատանքային օր առաջ:

ԳԼՈՒԽ 4. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

4.1. Բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի տարեկան ընդհանուր ժողովի կողմից՝ Խորհրդի առաջարկության հիման վրա:

4.2. Ընդհանուր ժողովը սահմանում է տարեկան շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և ժամկետները:

4.3. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը:

4.4. Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 (երեսուն) օր հետո:

4.5. Սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

1) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին

մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

2) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

4.6. Բաժնետերերի Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Քաղաքականության դրույթների պահպանման համար պատասխանատու են գործընթացում ներգրավված Բանկի բոլոր աշխատակիցները՝ սույն քաղաքականությամբ սահմանված իրենց գործառույթների շրջանակներում:

5.2. Եթե գործընթացում ներգրավված աշխատակիցների կողմից թույլ են տրվել սույն Քաղաքականության դրույթների խախտումներ, ապա Գործադիր տնօրեն-Տնօրինության նախագահի որոշմամբ կարող են կիրառվել ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն քաղաքականության տիրապետող է հանդիսանում Բանկի Ֆինանսական տնօրենը:

6.2. Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը, դրանում կատարվող փոփոխությունները տեղադրվում են Բանկի ինտերնետային կայքէջում:

6.3. Բանկը հրապարակում է (այդ թվում՝ Բանկի ինտերնետային կայքէջում տեղադրելու միջոցով) բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշման մասին տեղեկատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մայիսի 12-ից: